Սրա ծննդյան թվականը մեզ անհայտ է, բայց ինչպես Մատթեոս Ուռհայեցին է պատմում, ծերության հասակում հանկարծամահ է եղել Ուռհա (Եդեսիա) քաղաքում հայոց ՇԼԴ (534) և մեր 1085 թվականին։ Եթե ծերության հասակը համարենք 80 տարին, նշանակում է, նա ծնված պետք է լինի 11-րդ դարի առաջին տասնամյակում։

Ուռհայեցին Հակոբ Սանահնեցուն հիշատակում է հայոց անվանի մտավորականների՝ Կոզեռնի, Լաստիվերտցու, Դիոսկորոսի և այլոց շարքում[1]։ Նրա մահվան առթիվ գրում է.

«Դարձեալ ի թուականութեանս հայոց ի յամի ՇԼԴ մեռաւ Հայոց վարդապետն Յակոբոս Քարաբնեցին, որ յորջորջեալ կոչէր Սանահնեցին, այր հզօր և կորովի։ Սորա հասեալ ի վերայ հին և նոր կտակարանացն Աստուծոյ, ուսեալ և հասեալ սորա ի վերայ հեթանոսական իմաստութեանցն և տեղեկացեալ ամենայն փիլիսոփայական խորին գիտութեանցն. սա էր յաշակերտաց մեծին Դիոսկորոսի հօրն Սանահնին»[2]։

Դավանաբանական փիլիսոփայական հարցերում մեծ հմտություն ունենալու շնորհիվ 1065 թվականին Վասպուրականի Սենեքերիմ թագավորի Ատոմ և Ապուսահլ որդիների հետ միասին գնաց Բյուզանդիա հայկական ու հունական դավանանքների միացման խնդրով և իր ճառերով հույների համակրանքը շահեց («և հաճեալ ի բանս նորա ամենայն տունն Յունաց» (Ուռհ., էջ 227)։

Սակայն, Հակոբոս Սանահնեցին Քրիստոսի երկաբնակության հարցում հույների հետ որոշ համաձայնության եկավ իր՝ հայոց և հոռոմոց միաբանության թղթում, որի՝ հետևանքով հույները ուրախությամբ համաձայնվել էին հայոց դավանանքը միացնել հունականին, բայց այդ բանը միանգամայն անընդունելի էր հայերի համար, որովհետև, հայոց դավանանքը հունականին միացնելով, հայերը հունադավան կդառնային, կխախտվեր նրանց ազգային ինքնուրույնությունը, ուստի Կարսի Գագիկ թագավորը շտապ կերպով մեկնեց Բյուզանդիա, դեմ դուրս եկավ միացմանը և Հակոբոս վարդապետի միաբանության թուղթը չեղյալ հայտարարելով, ինքը, որ թագավոր լինելով հանդերձ նաև գիտնական էր, նոր գիր գրեց հայոց դավանանքի սկզբունքների մասին։ Այդ գրի բովանդակությունը պահպանվել է Մատթեոս Ուռհայեցու ժամանակագրության մեջ[3]։ Դրանով փրկեց հայերին հունադավանությունից։

Հակոբոսի անունով մնացել է մի շարական։

Աճառյանը Դիոսկորոսին 1039 թվականից հետո մեռած է համարում[4]։ Դա ակներև խալ է, որովհետև 1061 և 1063 թվականներին նրա անունով երկու արձանագրություն է պահպանվել Սանահնի վանքում (արձ. 105 և 179)։ Այդ երկու արձանագրությունների մեջ էլ Դիոսկորոսը հայրապետ տիտղոսն է կրում և թագավորի անվան հետ է հիշատակվում իբրև կաթողիկոս[5]։ 1063 թվականի արձանագրության մեջ Դիոսկորոսի անունն ավելի առաջ է գրված, քան Կյուրիկյան Կյուրիկե և Սմբատ թագավորների անունները։

«Ի ՇԺԲ թուին հայոց, ի հայրապետութեանն տեառն Դէոսկորոսի, ի թագաւորութեանն Կիւրիկէի և Սմբատայ...» (արձ. 179)։

Հասկանալի է, որ վանահայրն այդպիսի պատվի չէր կարող արժանանալ և Դիոսկորոսն այդ արտոնություններին արժանացել է միայն այն պատճառով, որ նա իրեն կաթողիկոս է համարել և իր վրա պահպանել է հայրապետ տիտղոսը։

Նշանակում է, 1039 թվականին կաթողիկոսությունից հեռացվելուց հետո Դիոսկորոսը դարձյալ Սանահնի վանքում առաջնորդ է կարգվում և այդ պաշտոնին մնում է առնվազն մինչև 1063 թվականը, որի մասին տեղեկություն ունենք Սանահնի մատենադարա-

[1] Մատթէոս Ուռհայեցի, Ժամանակագրութիւն, Վաղարշապատ, 1898, էջ 226—227։
[2] Անդ, էջ 226—227։
[3] Անդ, էջ 163—178։
[4] Աճառյան, Անձնանունների բառարան, հատ. Բ, էջ 71։
[5] Աճառյանն այս արձանագրությունների մեջ հիշատակվող Դիոսկորոսին այլ մարդ է համարում, առանց հաշվի առնելու, որ նա կրում է հայրապետ տիտղոսը և հիշատակվում է թագավորների հետ միասին։ Տե՛ս Անձնանունների բառարան, հատ. Բ, էջ 71։